ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/170

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ դատական դեպարտամենտ
Մասնակից՝ «Հի-Էլ-Կա» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցում, շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերում

Մասնակցությամբ՝
«Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ավագյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16320-2019 գրությամբ «Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 25.09.2019թ.-ի թիվ ԴԴ-3-Ե-8634 գրության հիման վրա, 04.10.2019թ.-ին «Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի 04.10.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 10.10.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 10.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 24.10.2019թ.-ին:

2. ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ դատական դեպարտամենտը 25.09.2019թ.-ի թիվ ԴԴ-3-Ե-8634 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է, որ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացնում է շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. «Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 07.10.2019թ.-ին գրությամբ դիմել է «Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16320-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք:

Ներկայանալով նիստին Մասնակցի ներկայացուցիչը հայտնել է, որ «Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ն ներկայացրել է սխալ դիմում-հայտարարություն, ինչպես նաև չի ներկայացվել հրավերով պահանջվող լիցենզիան: Մասնակցի ներկայացուցիչը նաև հայտնեց, որ Պատվիրատուի կողմից պահանջված շտկումը չի իրականացվել, քանի որ «Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ն ներկայացրել է բարձր գնային առաջարկ:

4. <u>ՍՑ-LO-2019/170 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 11.09.2019թ.-ին հայտարարվել է «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով աշխատանքի կատարման համար պահանջվել է «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» լիցենզիա հետևյալ տեսակները ըստ ոլորտների՝

- Բնակելի, հասարակական և արտադրական
- Էներգետիկ

Նույն հրավերով սահմանվել է, որ թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու մասին դիմում-հայտարարությամբ հայտնում և հավաստում է, թե որ երկրի ռեզիդենտ է հանդիսանում մասնակիցը:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ն:

«Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 19.09.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը (ներկայացված են միայն ներդիրները), ինչպես նաև գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունում չի նշվել, թե որ երկրի ռեզիդենտ է հանդիսանում մասնակիցը:

Նույն արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 23.09.2019թ.-ի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16320-2019 գրությամբ «Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 7.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 7.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատաս-

խանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է ներկայացնի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի գնանշման հարցման հայտը պատրաստելու մասին հրահանգի.

- 2.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի,

- 2.4 կետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից 11.09.2019թ.-ին հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով աշխատանքի կատարման համար պահանջվել է «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» լիցենզիա հետևյալ տեսակները ըստ ոլորտների՝

- Բնակելի, հասարակական և արտադրական
- Էներգետիկ

Նույն հրավերով սահմանվել է, որ թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու մասին դիմում-հայտարարությամբ հայտնում և հավաստում է, թե որ երկրի ռեզիդենտ է հանդիսանում մասնակիցը:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ն:

«Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Հանձնաժողովի 19.09.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը (ներկայացված են միայն ներդիրները), ինչպես նաև գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունում չի նշվել, թե որ երկրի ռեզիդենտ է հանդիսանում մասնակիցը:

Հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները՝ որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 23.09.2019թ.-ի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչով պայմանավորված Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից 11.09.2019թ.-ին հայտարարված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայել է հրավերով նախատեսված լիցենզիայի պատճենը (ներկայացված է եղել միայն ներդիրները), ինչպես նաև գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունում չի նշվել, թե որ երկրի ռեզիդենտ է հանդիսանում մասնակիցը: Ընդ որում, վերջինս էլեկտրոնային եղանակով տեղեկացված լինելով հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին, չի շտկել դրանք:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում...:

Վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.10.2019թ.-ի թիվ 26/26-1/16320-2019 գրությամբ «Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ինգնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/170 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Հի-Էլ-Կա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**